

## ԶԵՅԹՈՒՆԻ ՆԵՐԿԱՑԻՑ

ԶԵՅԹՈՒՆԻ գայմազամութիւնն ունի 50 հայ, 10-ը թուրք մեծ ու փոքր զիւղեր, որոնք իրանց աշխարհազրական դիրքով և քէհեայութիւններով բաժանուած են չորս գլխաւոր մասի կամ զաւառների, որոնք են—Զեյթուն, Ալաբաւ կամ Արեգի, Մխալ եւ Ֆոնտը:

Այդ բոլոր զիւղերը թէե ունեն իրանց քէհեաներն ու ազգեցիկ զիւղապեաները, այսու հանդերձ պատկանում են ԶԵՅԹՈՒՆԻ 4 թաղերին և նրանց չորս իշխաններին: Գաւառի ընդհանուր աղղաբնակութեան մէջ տեղի ունեցած գլխաւոր վէճերը, գատերն ու հասարակուկան խնդիրները կարգադրում են այդ զիւղերը: Տակաւին մինչև վերջին ժամանակներս զիւղական բնակիչները տուրք էին վճարում իրանց իշխաններին ամուսնական, ծննդեան և առեւրական որոշ հիմունքներով: Նաև թուրք բնակիչները իշխանների հպատակներն են և ապրում են այս կամ այն իշխաննի պաշտպանութեան տակ ճիշտ այնպէս, ինչպէս Վերին-Հայաստանի շատ զաւառներում հայերը ապրում են այս կամ այն քիւրդ կամ թիւրք թէկի կամ խանի իշխանութեան տակ:

ԶԵՅԹՈՒՆԻ հիւսիսային և արեւելեան կողմները հաստատուած զիւղերն ու ամբողջ Արեգին պատկանում են Եէնի-Դիւնիայեան իշխանին, հարաւ-արևմտեան զիւղերը՝ Բօղ-Բայիրի իշխանին. Մխալ գաւառակը, Թանըր և Դէօնկէլ թիւրքական զիւղերով միասին՝ Սուրէնեան իշխանին, իսկ Ֆըռնուղ գաւառակը՝ Կարկալարի իշխանին:

ա) ԶԵՅԹՈՒՆ գաւառակ.

Հիւսիսային լեռների բարեկեր ձորերի և հովիտների մէջ հաստատուած են 12 մեծ ու փոքր զիւղեր, բաղկացած հայերից: Հայերը գաղթած են ԶԵՅԹՈՒՆԻ Վերի թաղից նախորդ գարու վերջերից սկսած: Բնակիչների ընդհանուր թիւը հասնում է մինչև 200 տան: Քաղաքի արեւելեան կողմը, Բէրդինկա և ս. Փրկիչ լեռների ստորոտը՝ հաստատուած են ութ զիւղ, 180 տուն բնակիչներով, որոնց միայն 40 տունը թիւրք են: Զորսական

մղոն հեռաւորութեամբ քաղաքին հարաւային և արեմտեան կողմարը հաստատուած են երկու մեծ հայկական գիւղեր—Հաջի-Դերէ և Ֆենի կամ Խըբի, 50-ական տուն բնակիչներով։ Ձէնքի շուրջը տեսնւում են վանքի, եկեղեցու և բազմաթիւ շէնքերի աւերականեր։

բ) Ալարաշ կամ Արեղի զաւառակ.

Ալարաշը Զիհանի և Զէյթունի գետակի մէջտեղ մի թերակղի է և բնական սահմաններով բաժանուած իր շրջակայ գաւառներից։

Ալարաշը ընկնում է Զէյթունից հարաւարենեք և ունի 300 տուն հայ բնակիչ, բաղկացած 18-20 մեծ ու պղտիկ զիւղերից կամ, տեղական բառով, օրաներից, որոնք անուանուած են տեղի մեծ ընտանիքների անուններով կամ ազգանուններով և կամ մի որ և է պատմական դէպքի լիշտակով։ Ալարաշը չունի բաւական ընդարձակ դաշտագետիններ։ Նա կազմուած է բազմաթիւ կոնաձե ձգուած հողաբլուրներից, որոնց ամենաբարձր դագաբը կոչւում է Նամբէկ, որ գտնւում է գաւառակի կենտրոնը և Զէյթունից մօտաւորապէս 10 մելոն հեռի։ Օբաները ցրուած են Շամբէկի շուրջը՝ վեց ժամ տարածութեան վրայ։

Ալարաշը մի ընդարձակ նահասկետական համայնք է, որ կառավարուում է մի ընդհանուր գիւղապետի կամ քէնեայի միջոցով։ Նա բաժանուած է երկը մեծ գերդաստանների կամ աշխերիների, որոնց անուններն են։ —Վարդանենի, Շենըքենի և Եկկինենի։ Վարդանենի հաստատուած են Շամբէկի արեելեան և հարաւարենելեան կողմերը, և օբաներից մի քանիսը ցրուած են մինչև Զիհանի եղերքը։ Այս գերդաստանը միւսներից աւելի բազմաթիւ է և ունի 200-ի չափ դէպք գործածող տղամարդիկ։ Ըստհանուր գաւառի մեծ քէնեան կամ միւղերը շատ անդամ այդ գերդաստանից է նշանակուել Շէնըքենիք բնակւում են Շամբէկի բարձրագոյն մասերի վրայ, իսկ Եկկինենիք հարաւային կողմը՝ Զէյթունի գետակի եղերքները։ Ալարաշը բնակուած են Շամբէկի բարձրագոյն մասերի վրայ, իսկ Եկկինենիք հարաւային կողմը՝ Զէյթունի գետակի եղերքները։ Ալարաշը բնակուած են Եկկինենիք բնակուած են Արեգին բոլորովին ամայի ու անմարդաբնակ էր և Արեգին թշնամիների սննդհատ յարձակումների պատճառով խոյս էր տուել դէպի հիւսիս։ Սակայն յետոյ բազմանալով և զօրանալով, հետզհետէ գրաւած են ամբողջ Շամբէկը և վերջին տարիներս էլ անցնելով Զէյթունի ջուրը՝ առաջացան մինչև Քիւրիւրիւի և Նաղիւրլիի սահմանները Շէնըքենից օրայից մի քանի ծերեր, իբր սերնդաբար աւանդուած իրանց պապերից, պատմում էին, թէ «շատ ժամանակ առաջ, երբ այս վայրերը բնակութիւն չը կար, մի քանի ընտանիքներ Սասունի կողմերից գաղթելով

ապաստանած են Անկ-Զորը և յետոյ հաստատուած ո. Փրկչի լեռնահովիտների մէջ; Իբր թէ այդ ընտանիքներից երկուաը Սասունի Շէնըք գիւղի բնակիչներից են եղել, ուրիշ երկուան էլ Տարօնի Վարդենիս գիւղից, որոնց այդ գիւղերի անուններով իրանց բազմացած ընտանիքները կոչուել են Շէնըքենք և Վարդանենք»: Ալարացցիների ընտանեկան և հասարակական սովորութիւնները և նիստ ու կացը շատ նման են սասունցիների սովորութիւններին և նիստ ու կացին:

Շամբէկի արևմտեան կողմը հաստատուած է մի գիւղ Ալարօզան անունով: Մօտ 50—60 տարի առաջ մի քանի ընտանիք Մխալից գաղթել և բնակուել են այդտեղ, ուր բազմանալով այժմ հասել է նրանց թիւը մինչև 25 տուն: Ալարօզանը հաստատուելով Ալարաշի հողի վրայ, այդու հանդերձ մինչև հիմա նոյնութեամբ պահած է Մխալի հետ իր նահապետական տոհմային կապերն ու յարաբերութիւնները և ենթարկուում է Մխալի քէնեայի իշխանութեան:

Ալարաշը Խուրբինեան թագաւորութեան ընթացքում յիշուած պատմական Արեգին (Է\*), որ ունէր իշխանական տուն, բազմամարդ գիւղեր, կրօնական միաբանութիւն և նշանաւոր վանք, որի իրաւասութիւնն ընդարձակուում էր շրջակայ բազմաթիւ թեմերի վրայ: Ալարաշ կոչուել է թիւրքերի կողմից միայն այս գարուս սկզբում: Դեռ մինչև այժմ գէյթունցին ու տեղացի բնակիչը անուանում են Արեգի, որ այդ անունը ընդունած է, անշուշտ, իր աշխարհագրական դիրքի չնորհով: Սկսած Շամբէկի բարձրութիւնից՝ հրասիրց գէպի հարաւ, ամբողջ գաւառակը աստիճանաբար խոնարհուող բլրակներով ցածանում ձգուում է մինչև Զիհանի և Զէյթունի գետակի եղեքը և ամբողջութեամբ եռանկիւնի մի ընդարձակ զառիվայրի դիրք ընդունած՝ տարածուում է արեկերթ դիմաց: Եւ արեգակը, առաւտաւայ գէմ երևան գալով Ախըր-Դաղի բարձր գաղաթներից, իր անդրանիկ շողերն ուղղակի կերպով ցոլում, սփռում է ամբողջ գաւառակի ընդարձակութեանը վրայ, միաժամանակ լուսաւորելով և բազմաթիւ սանդիմաւոր բլուրների բարձունքները, և անտառները, ձորերն ու լեռնահովիտները, նրանց ամեն անկիւնները: Ահա բնութեան սոյն տեսարանի առջե բնակիչները այն միլրեկ են Արեգի կամ Արեգնի անունով:

Կիլիկիայի իշխանութեան և մամնաւորապէս ՀՊ-ըդ գարու անմիջապէս վերջերը կոննի թագաւորութեան պատմու-

\* ) Տե՛ս «Սիսուան», երես 191.

թեան մէջ յիշատակւում է Արեգնի բերդ \* ) և Արեգնի վանի, որոնք  
իր ժամանակին առաջնակարգ կարերութիւն և զեր են ունեցել:  
Հիմաստելով պատմութեան տուած մեկնութիւնների և աւանդու-  
թիւնների վրայ, որպէս և աչքի առաջ ունենալով այդ վայրերի  
աշխարհագրական դիրքը, հին Արեգնի գտատի սահմանները  
կազմում էին, արենելիքից՝ Զիհանը, հարաւայց՝ Ֆանուղի գտ-  
առը կամ համանուն գետակը, արեմուտքից՝ Կոկիսոնի լուսներն  
ու Թէքիրի ձորանովիտը և հիւսիսից՝ Բէրիդի լմաները: Զէյթուն  
գտառը, որ այդ ժամանակները զեռ ևս չէր կրում այդ անու-  
նը և չունէր այն նշանակութիւնը, ինչ ունի ներկայումս՝ գտըն-  
ուում էր Արեգնի գտառի սահմանում և վերջինիս բերդատէ-  
րերի իշխանութեան ներքոյ: Հին Արեգնի բերդը, որ անորոշ  
ու մութը կերպով յիշատակուած է պատմութեան մէջ և որի  
մասին մի քիչ ներքի պիտի խօսենք, մի և նոյն բերդն է, ինչ որ  
այժմ զոյութիւն ունի Արեգնի կամ Կիւրէտինի և կամ Ալարաշն  
բերդ անուններով: Հ. Ալիշանը այդ բերդի վայրը փոխադրում  
է Եփրատի և գերքը՝ տարակուսակով նրա ճշտութեան նկատմամբ:  
Եւ, բացի այդ, ևթէ Ալարաշն շրջականները երևան չը զան հին  
Արեգնի վանքի աւերակներ և կամ պակասի ստուգութիւնը նրա  
տեղի մասին՝ պէտք է կարծել, որ այժմու ո, Փրկիչ կամ ո,  
Աստուածածին վանքերից մէկն է նշանաւոր և պատմական Ա-  
րեգնի վանքը: Սյու ժամանակներն առհասարակ վանքերը կոչ-  
ուում էին իրանց գտառի կամ երկրի անունով, ինչպէս հէնց  
այդ շրջակագրում՝ Կանչի վ., Ֆաւոնաւի վ., Ընկուզու վ., և  
այլն. մինչդեռ վերջերս մի և նոյն հաստատութիւնները ծանօթ են  
մեզ ո, Ստեփանոս վ., ո, Կարապետ վ., և այլն անուններով:

Այժմ չը կան, չեն մնացել հին Արեգնից ոչ մի յիշատակ,  
ոչ մի հետք կամ աւերակ: Ամբողջ բլուրներն ու ձորերը ծած-  
կուած են կարծ ու խիտ մացառներով, մայրիններով կամ զանա-  
գան վայրի ծառերով, որոնք հազիւ մի քանի դարերի բռւսա-  
կանութեան արդիւնք են, և բացայցայ է, թէ նախ քան կարծ  
դարերի միջոցը այդտեղ զոյութիւն ունէր եռուն կեանք և  
աշխատում էին հազարաւոր մշակող ձեռքեր:

Ալարաշները կտրիծ են և զէյթունցու նման քաջ պա-  
տերազմիկ, ինչ որ յետոյ պէտք է տեսնուի պատմութեան ըն-  
թացքում: Նրանք մասնակցած են բոլոր կոփներին և ամեն ան-  
գամ Զէյթունի համար ունեցել են այն եղակի զերը, ինչ որ առ-  
հասարակ պատերազմերի մէջը ունեն առաջապահ զօրապնդերը:

\* ) Թիրքական տիրապետութիւնից լետոյ, ինչպէս նաև այժմ, ան-  
ուանում է Կիւրէտինի բերդ:

Եւ հէնց այդ պատճառով նրանց օրաները յաճախ աւերռւած ու հրդեհուած են արշաւող թշնամիների կողմից: Սլարաշցին այժմ շատ թշուառ դրութեան մէջ է և իբրև ապրուստի միջոց՝ ունի միայն խաղողն ու չամիչը:

Սլարաշի հարաւ արեմուտք, Զէյթունի գետակի անմիջապէս եղելքը՝ կանգնած է պատմական նշանաւոր Արեգնի բերդը, որ տեղացիք շարունակում են անուանել Արեգնու կամ Կիւրէտինի բերդ: Սա նշանաւոր է իր ամրութեամբ, բարձր ու լայն դիրքով և գեղեցիկ կլոր ձևով: Բերդի բոլորակի կողքերի սև ու բարձր ապառաժները կարծես վերից ի վայր ուղղակի կարուած և արհեստական կերպով քանդակուած լինին: Միայն մի ճանապարհ բարձրանում է միջնաբերդը, որի համար հարկաւոր է մագլցելով գնալ: Դեռ ես, կիսափուլ, մոռւմ են արտաքին դասն կամարներն ու չեմքը, որի երկու կողմերը, ապառաժների մէջ, յաջողակ կերպով փորուած են պահապանների յատուկ տեղերը, որոնք պահուել են նոյնութեամբ դարերից ի վեր: Բերդի վրայ բաւական ընդարձակ է, ուր, ինչ որ հաւանական է, հին ժամանակները գտնուում էին բազմաթիւ տներ ու հաստատութիւններ, որոնց աւերակները որոշ կերպով նկատելի են այժմ: Երթեւեկութեան համար ապառաժների վրայ տեղաւոզ շինուած են նեղ, մանր, կանոնաւոր սանդուիններ, որոնց աստիճանների վրայ ստիլուած ես գնել ուղերի ծայրերը միայն և զգուշաւոր կերպով: Ենթի արեմտեան մասում պատրաստուած են երկու մէտր տրամագծով և քառակուսի բերաններով արհեստական վեց ընդարձակ և խիստ խորը ջրամբարներ, որոնց շուրջը շինուած կանոնաւոր ուղիները՝ անձրեի և ձիւնից հալած ջրերը հաւաքում են այնտեղ: Անկարող եղայ գտնել ո և է արձանազրութիւն:

Ենթի հանգէպ, գետակի միւս եղերը, նոյնանման ապառաժներով և աւելի բարձր գիրքով կանգնած է մի հսկայ սար՝ Ալա-Փայա կամ Գաֆա անունով, որ նոյնափափ նշանաւոր ամրութիւն է և ունի բազմաթիւ ընդարձակ քարայրներ, ուր երկար ժամանակ ապաստանել են Զէյթունի ասպառակային խմբերը՝ թէ նախորդ գարերի և թէ Պապիկ փաշացի ու Շամ-Քէշի օղուի ժամանակները: Սոյն բերդի և Գայացի համար տեղացիները պատրում են աւանդաբար առասպելախառն պատմութիւններ,

գ) Մխալ կամ Սւագ-Կալ գաւառակ.

Մխալի գաւառակը գտնուում է Զէյթունի հարաւ-արևմբաւեան կողմը գրեթէ 5 մղոն հեռաւորութեամբ, ընդամենը 350 տուն բնակիչներով: Սոյն գաւառակի գիւղերն էլ Ալաբաշի հետ միասին երկու մնդամ այրուեցին թիւրքերի կողմից սնցեալ տա-

բուայ վերջին կիսում: Բնակիչների ապրուստի միջոցն է, ինչպէս միւսներինը, միայն խաղողը, և գտնուսմ են ծայրացել աղքատութեան մէջ:

Դ) ՖՈՆՈՎՈՂԻ ԳԱԼԱՊԱԿԻ.

ՖՈՆՈՎՈՂԻ ԳՏՆՈՒՍՄ Է ԶԵՅԹՈՒՆԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՄՏԵԱՆ ԿՈՂՄԸ, մօտաւորապէս 24 մղոն հեռաւորութեամբ Սրանից 20 տարի առաջ այս գաւառակը, հակառակ իր աշխարհագրական և արևատեսական յարմարութիւններին, պատկանում էր Անդրունի գայմագամութեան, սակայն 78-ի յայտնի դէպքերից յետոյ արձանագրուեց ԶԵՅԹՈՒՆԻ գայմագամութեան հետ միացուած: Նրա սահմաններն են, հիւսիսից՝ Թէքիրի գետակը, արևմուտքից և հարաւից՝ Կոկիսոնի ու Կապանի լեռները և հարաւ-արևելքից՝ Սէկի լեռը:

ՖՈՆՈՎՈՂԻ ԳԱԼԱՊԱԿԻ բաղկանում է մօտաւորապէս 16 հայկական գիւղերից, որոնք ունեն ընդամենը 450 տուն բնակիչ և մի քանի թիւրքական գիւղեր՝ 70 տուն:

Գիւղերից ամենամեծն է ՖՈՆՈՎՈՂ կամ Խժուդ, 200 տուն բնակչով, որ հաստատուած է համանուն լեռան արևելեան ստորոտը՝ գետակի հիւսիսային եղերքը, մի փոքրիկ ձորահովտի մէջ: Սիսուանեան հարստութեան ժամանակ նշանաւոր է եղած ֆըռնուուզը \*): Նկատի առնելով տեղական աւանդութիւնը, իր 6—7 դար առաջ ՖՈՆՈՎՈՂ հաստատուած էր գետակի միւս եղերքը Սէկի զառիվայրի վրայ, իսկ աւելի վերջ, երբ արտաքին թշնամիների յարձակումները սաստկացան, բնակիչները, այլ ևս անկարող զիմադրելով՝ փոխադրուեցին այժմու վայրը աւելի ապահով գիւրքով: Հաւանական է, թէ այս է պատճառը, որ պատմութիւնը յիշատակում է «հին» կամ «նոր» ՖՈՆՈՎ անունները: Անցեալ դարու սկիզբները բնակիչները բազմանալով ցրուած են շրջակայ վայրերը և կազմել են շրջակայ գիւղերը կամ օրաները:

Գլւաւոր գիւղերն են.—ՖՈՆՈՎՈՂԻ հիւսիսային կողմը, իրարից մէկ և կէս կամ երկուական մղոն հեռի, Հին-գեղլ և Կոչուլիս: Առաջինի արևելեան կողմը, հինգ վայրկեան հեռի, գտընւում է աւերակ դարձած մի բերդ, լմականաբար հին Ֆաւոնաւար, որի բերդատէրն էր, ՏՊ-րդ դարի վերջերում, Արլդարիք անուն մի իշխան: Այդտեղ բարձրանալը բաւական դժուար է, վերեը դեռ կանգուն են կիսափուլ պարիսպներ, կամարներ և սանդուխներ: Բերդի շուրջը յայտնի են երեսում շէնքերի մնացորդներ և մի վանքի ու եկեղեցու աւերակներ, որոնց մասին ժողովրդական աւանդութիւնը հաղորդում է, իբր թէ սրանք դեռ

\*) ՏԵ՛Ր ԽԻՍՈՒԱՆԱ, 192 երես:

դրյութիւն ունէին մէկ և կէս կամ երկու դպր առաջ։ Հին-գեղցի  
մի քանի ծերեր պատմեցին, թէ իրանց պապերի ժամանակ,  
այսինքն 18-րդ դարում, մահմեղական բերդատէրեր զրաւած  
ունէին այդ և Արեգնու բերդերը և բնակութիւն հաստատած։  
Սոյն երկու բերդերը կանգնած են դէմ առ դէմ, բարձր դիրքե-  
րի վրայ, մօտաւորապէս 10—12 մղոն հեռաւորութեամբ։ Սրանց  
վերջին տէրերը, իբր, երկար ժամանակ կոխներ են ունեցել և  
կոտորել միմնանց։ Անկարող եղայ ստոյգ տեղեկութիւն ստո-  
անալ, թէ նրա էր այդ և բերդատէրերը ինչ ցեղից էին և կամ ինչ-  
պիսի յարաբերութիւն ունէին հայերը դրանց հետ։ Հին-գեղցի  
անմիջապէս մօտն է ս. Կարապետ նշանաւոր վանքը, որ վա-  
ռուեց թիւրքերի և չէրքէցների կողմից վերջին ապստամբու-  
թեան միջոցին։ Վանքի մէջ գտնւում էին Ռուբինեանց ժամա-  
նակից մնացած բազմաթիւ հնութիւններ, ձեռագրեր, յիշատա-  
կարաններ, թանկապին եկեղեցական սպասներ և այլն, որոնք,  
պահուած լինելով դադանի մի տեղ՝ այրուեցին վանքի հետ  
միասին։

Ֆոնուղի արևմտեան կողմը գտնւում է Հին-կանչին կամ  
Չուզուր-Հիսարը, որի դիրքը խիստ անսառիկ է և ունի մի փոք-  
րիկ ու բարեկեր դաշտագետին՝ շրջապատուած լեռների անան-  
ցանելի շղթաներով, որոնք պատսպարած են նրան՝ որպէս բը-  
նական ամուր պարիսպներ։ Հայերը անուանում են Կանչի նաև  
այժմ։ Սրանից մօտ 15—20 տարի առաջ այդտեղ հաստատուել  
է մի հայկական գիւղ—Սլաճանէնք՝ տեղափոխուած ֆոնուղից։  
Դաշտի հիւսիսային կողմը, միմեանց կցուած, կան պատմական  
կանչի բերդն ու կիսաւեր ս. Ստեփանոսի վանքը, որի մա-  
տուոփ մէջ կայ մի գերեզման։ Այդտեղ, այդ գերեզմանի մէջ է  
թաղուած ունեցի Ստեփանոսի գիւղ, որի գերեզմանաքարի  
մօտից բղխում է սառը և անուշ ջուր։ Վանքից գէպի արևմ.-հիւ-  
սիս, կէս ժամ հեռու, կանչի լեռնահովանի մի ձորի մէջ սպա-  
նուած են Ստեփանոսի ՅՅ ընկերները, որոնց յիշատակը տօ-  
նում է հայոց եկեղեցին։ Ծերունի գիւնականը՝ Հ. Ղ. Ալիշանը  
մանրամասն կերպով պատմում է Ստեփանոսի սպանութիւնը  
ու այլ և այլ պարագաները, սակայն նահատակութեան տեղի  
մասին երկմտութիւն է յայտնում\*։ Տեղական աւանդութիւնը,  
չը նայած որ երկար դարեր են անցել, բոլորովին թարմ կեր-  
պով նշանակում է վանքի, գերեզմանի և սպանութեան տեղե-  
րը։ Թէ հայերը և թէ Չուզուր-Հիսարի թիւրքերն ուխտի են  
զնում այդ գերեզմանի վրայ և տարուայ մէջ մի օր ահազին  
բազմութիւն է հաւաքւում նրանց յիշատակը տօնելու։

\*.) Տե՛ս „Սիսուան“, 184—185 երես։

Ֆոնուղի շրջանակները լիքն են բազմաթիւ հնութիւններ և աւերակներ: Չուգուր-Հիսարի մէջ կան երբեմն լուսների ստորոտ նուրբ քանդակագործութեամբ և քառակուսի փոքրիկ դաներով փորուած մեծ ժայռեր, որոնք խուցի նմանութիւն ունեն և արդինք են երկարատն ու հմտալից աշխատութեան: Պարզ է, որ հոսմէական և յունական դարերից են մնացած, Այդ քարէ խուցերը, հաւանականարար, ձնաւորների բնակուրաններ են եղած, իսկ հալածանքների ժամանակ փախստական-ների ապաստան:

Ֆոնուղից Յ մղոն հեռու գէպի հարաւ, Սէկի լեռան հիւս-արևմտեան կողմը, մէկ աննշան բերդի շուրջը գտնւում են ընդարձակ աւերակներ, որոնց մասին բնակիչները աւանդում են, թէ այդունզ հաստատուած էր հին Ռւլնիա քաղաքը, որ հրդեհուելով արշաւող ցեղերի կողմից՝ ողջ մնացած բնակիչները խոյս տուին և բնակուեցին Ֆոնուղի դետի միւս կողմը:

Ֆոնուղիներն ունեն ընդարձակ խաղողի այգիներ և մի և նոյն ժամանակ պարապում են փայտահատութեամբ և անամնապահութեամբ: Ֆոնուղն ու իր գաղթականութիւնը զգալի կերպով զանազանում են իրանց սովորութիւններով, հասարակական նիստ ու կացով մօտակայ հայկական գաւառների բնակիչներից: Սրանք կուլտուրապէս աւելի բարձր են քան շրջակայ գիրդերը:

Ֆոնուղից Յ մղոն գէպի արեելք համանուն գետակը և կէս մղոն աւելի հեռու Զէյթունի գետակը միանում են Թէքիրի ջրի հետ, ուր, այդ միախանուուած տեղը, կոչում է Սու-Զարի:

Կապանը կիլիլիսայի պատմութեան մէջ ամենայայնի տեղըն է գրաւում: Ռուբինեան հարստութեան ընթացքում նա երկար ժամանակ մնացել է հայոց իշխանութեան ներքոյ և եղել հայ իշխանների կամ թագաւորների կենտրոնավայր: Եշտնաւոր են նրա աշխարհագրական ամուր գիրքը, անառիկ լեռները, որոնք բնական պարիսպ են եղած երկրի համար՝ իրանց նեղ ու դժուարանցանելի կիրճերով, նրա բերդերը և ընդարձակ բարերեր գաշտը:

Կապանը գտնւում է Մարաշի, Հաճնի և Զէյթունի մէջ-տեղը, իւրաքանչիւրից մօտաւորապէս 48-ական մղոն հեռաւորութեամբ և վերջինի հարաւ-արևմտեան կուլ ։ Կապան գիւղը հաստատուած է մի լեռնաշղթայի ստորոտը ուազմական կարեսը գիրքով: Դիւղից գէպի արեմուեան-հիւսիս, հինգ մղոն հեռու, նեղ կիրճերի բացուածքի առջև կանգնած է համանուն յայսնի բերդը, որի շինութիւնն ու ճարտարապետութիւնը հոսմէական դարերի գործ է, և գեռ ևս հաստատ մնում են ներքնարերով:

շէնքերի մեծադոյն մասը—կամարակաս տենեակներ, պարիսազներ և այլն: Բերդի հիւսիսային և արեելեան կողմերը բարձրանում են բարձր ապառաժներով ընդարձակ լուսներ, որոնք կոչւում են Աստուածակներ և Պարանիլլ: Բերդից հիւսիս-արեւմուտք, աւելի բարձր դիրքով և հազիւ կէս մղոն հեռի է հին Շողականը, որի գագաթի վրայ ապառաժների մէջ հաստատուած է մի զմբեթաւոր ուխտատեղի՝ սառը աղբեւրով և մի գերեզմանով: Տեղացիք նշանակում են նոյն այդ անունով և պատմում նրա մասին աւանդական զանազան անց ու դարձեր:

Դիւղի առջև տարածւում է գաշտը՝ մօտաւորապէս 20 (?) մղոն երկարութեամբ և 18 (?) մղոն բանութեամբ, ուր մշակւում են ցորեն, գարի և այլ հացարոյսեր, և որ ոռոգւում է Քէօր-Սիւլիւ գետակով: Վերջինս ծագում է Կոկիսոնի լեռներից և անցնելով Եէնիջէ-Գալէից ոչ շատ հեռի՝ միանում է Զիհանսին: Դաշտի հարաւային լեռների կողքին կանգնած է մի կիսաւեր բերդ, որի քարայրներում պատսպարուում են Դաւուրլու անունով հայ զիւղի վրանաբնակ բնակիչները ձմեռուայ ամիսներուում:

Կապան գաւառուակը կազմում են վեց զիւղեր, չորս հայկական և երկու թիւրքական:

Կապանի բոլոր զիւղերն ունեն բարեբեր ու ընդարձակ դաշտեր և արտադրում են այլ և այլ հացարոյսեր: Երկրագործութիւնը այստեղ աւելի լաւ վիճակի մէջ է քան չրջակայ հայկական միւս գաւառներում:

Կօկիսոնը գտնուում է Զէյթունից հիւսիս-արեւմուտք մօտաւորապէս 40 մղոն հեռու, ընդարձակ բարեբեր լեռնադաշտերով: Դեռ սրանից 40 տարի առաջ այնտեղ հաստատուն բնակութիւն չը կար, և ամեայի երկրի մի մասը ծածկուած էր անտառներով: Բաղաբջըգ, Զուգուր և Ամրդ օվաները բնակող թիւրքմէն, աւշար, թէջիր և ուրիշ բազմաթիւ ցեղեր ամառը բարձրանում էին այնտեղ իրանց արջանների հետ: Սակայն 60-ական թուականներից յետոյ սուլթան Ազիզի կառավարութիւնն այդ բարեբեր գաւառը յանձնեց Կովկասից գաղթող Զէրքէղ ցեղերին, որոնք այժմ բազմացած են և իրանց թիւը հասնում է Կոկիսոնի գաւառակի մէջ մօտ 1500 տուն:

Բնակիչներն ընդհանրապէս գաղթած են Միալից անցեալ դարու սկիզբները և բազմացած: Նրանք պարապում են երկրագործութեամբ:

Եկեղիչէ-Գալի գաւառակը գտնուում Զէյթունի հարաւային կողմը, մօտ 70 մղոն հեռի: Այնտեղ կան մօտաւորապէս 600 տուն բնակիչ, որոնց երկու երրորդը հայեր են 12 զիւղերում բնակուած:

Այստեղ աւելորդ չենք համարում գնել վիճակազրական մի աղիւսակ, որից կարելի է, մօտաւոր թուերով, ամփոփ զաղափար կաղմել Զէլթունի գաւառի ազգաբնակութեան մասին:

### Զէլթուն գաւառի վիճակագրութիւնը

(Պատրաստ 95—96 թուականին)

	տուն.	տուն.
Զէլթուն քաղաքը . . . .	2000 հայ	30 թիւրք.
Զէլթունի հիւսիսային կողմը 12 գիւղեր	100 »	100 »
» արեելքը 8 գիւղեր . . . .	140 »	40 »
Հաջի-Դէրէ և Ֆէնք	100 »	— »
Ալաբաշ կամ Արեգի գաւառակը	350 »	— »
Մխալ կամ Աւագ-Կալ »	350 »	70 »
Ֆանուզ՝ իր շրջականերով	500 »	70 »
Կապան՝ վեց գիւղերով միասին	640 »	90 »
Կոկիսոնի հայկ. գիւղերը Զէլթունի սահմանի մէջ գտնուած . . . .	350 »	50 »
Եէնիշէ-Գալէի միւդիւրութիւնը . .	400 »	200 »
	4930 »	650 »
Իւրաքանչիւր տուն հաշուելով 7-ա- կան հոգի *) . . . .	× 7	× 7
	34,510 հայ.	4,550 թիւրք:

Գումար Զէլթուն գաւառի ընդհանուր ազգաբնակու-  
թեան՝ 39,060 բնակիչ, որի գրեթէ հարիւրի 89-ը հայ է և 11-ը  
թիւրք:

Հ.

\*) Զէլթունի թէ քաղաքի և թէ գիւղերի մէջ ընտանիքները բազմ-  
անգամ են և առհասարակ մի տան անդամների թիւը 10-ից ամելի կը լի-  
նի, սակայն այստեղ մենք կը հաշունք իւրաքանչիւր տուն առնուազն  
7-ական հոգի: